



ԵՐԿՈՒՇԱՔԹԻ, 2 ՀՈԿՏԵՄԲԵՐ, 2017

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւնն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւնն զբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա զիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ԱՌԱԿԱՅ 31

ԱՌԱՔԻՆԻ ԿԻՆՆԸ

Առաքինի կինը ո՞վ կրնայ գրնել:

Անոր գինը գոհարներէն շափ աւելի է:

Անոր հրկանը սիրտը անոր վրայ վստահ է

ու աւարի կարօտ չըլլար:

Անիկա իր կեանքին բոլոր օրերուն մէջ

անոր բարիք կը բերէ եւ ոչ թէ չարիք:

Բուրդ ու քթան կը փնտռէ եւ ուզածը ձեռքովը կը գործէ:

Անիկա վաճառականի նաւերուն կը նմանի:

Իր հացը հեռու տեղէ կը բերէ:

Իր ձեռքերուն պտուղէն այգի կը տնկէ:

Իր մէջքը զօրութեամբ կը պնդէ

ու իր բազուկները կը զօրացնէ:

Անորը այրը կը ճանչցուի դռներուն մէջ,

երբ երկրին ծերերուն հետ նստի:

Զօրութիւն ու փառք կը հագնի

ու վերջին օրերը պիտի ուրախանայ:

Իր բերանը իմաստութեամբ կը բանայ

եւ իր լեզուին վրայ քաղցրութեան օրէնք կայ:

Իր տանը ճամբաները կը քննէ

եւ ծուլութեան հացը չ'ուտեր:

Անոր տղաքը կ'ելլեն ու վանիկա երանելի կ'անուանեն:

Անոր այրն ալ վանիկա կը գովէ, ըսելով.

«Շափ աղջիկներ առաքինի եղան,

բայց դուն ամենէն գերազանցը եղար»:

Վայելչութիւնը սուտ է ու գեղեցկութիւնը ունենայն է,

սակայն Տիրոջմէ վախցող կինը պիտի գովուի:

Տուէք անոր իր ձեռքին պտուղէն

ու անոր գործերը դռներու մէջ

պիտի գովեն վանիկա:

ՇԱՐԱԿԱՆ - ԱՂՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:

Սմենասուրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:

Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց աղքայութիւն:

Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

ՕՐՈՒՄՆ ՆԻՒԹԸ



ՊԵՏՐՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԸՆԴՀԱՆՐԱՊԵՏՆԻ ՆԱՄԱԿԷՆ

3:1-7

ՅՈՐԴՈՐ ԿԻՆԵՐՈՒՄՆ ԵՒ ԱՅՐԵՐՈՒՄՆ (3:1-7)

Չմոռնանք նախորդող հապուածը, ուր Պետրոս Առաքեալ գործնական թելադրութիւններ փոխառաւ քրիստոնէութեանը, թէ ինչպէս կարելի է ապրիլ հեթանոս այս աշխարհին մէջ, առանց սակայն անոնց նման ըլլալու, ինչպէս պիտի ըլլէր Քրիստոսը. «Դուք այս աշխարհին չէք պարկանիք»: Ահա նոյն հասկացողութեամբ, այս անգամ Պետրոս Առաքեալ կը խօսի քրիստոնէայ կիներուն եւ այրերուն, թէ ինչպէս կարելի է ապրիլ մեր քրիստոնէական հաւաքը իբրեւ այր եւ կին, իբրեւ ամուսիններ, առանց սակայն, նմանելու հեթանոս աշխարհին, ու անոնց մտածողութեան: Ինչպէս որ է այսօր պարագան: Որո՞ւ կ'ուզենք նմանիլ իբրեւ այր եւ կին, իբրեւ ամուսինները: Այսօրուան աշխարհը շար մը օրինակներ եւ նմուշներ կու տայ այր կամ կին ըլլալու, ամուսիններ ըլլալու: Անոր համար ալ ամբողջ ընկերութեան, առաւել եւս քրիստոնէայ ընդհանրութեան վիճակը եղածը է այդպիսին, ինչ որ արդէն խանգարուած վիճակի մէջ է, չըսելու համար քանդումին ու անկումի եզրին: Մինչդեռ Քրիստոս մեզ կանչեց ըլլալու փարբեր այս աշխարհէն, չպարկանելու այս աշխարհին, չնմանելու այս աշխարհին ու աշխարհի դրուածքին:

2-րդ գլուխին մէջ Պետրոս Առաքեալ խօսեցաւ հնազանդութեան մասին պետութեան եւ իշխանութեան, խօսեցաւ հնազանդութեան մասին ծառաներ իրնց փերերուն, որպէս օրինակ վերցնելով Յիսուս Քրիստոսի հնազանդութիւնը: Այս անգամ Պետրոս Առաքեալ կ'անդրադառնայ ընդհանրին, ու անոր անդամներուն, ըսելու համար թէ ինչ որ Աստուած կամեցած է ընդհանրին համար, պէտք է որ հետեւի նոյն այս հնազանդութեան ընթացքին, ըստ այնմ ըլլալու կին եւ այր, այնպէս ինչպէս որ Աստուած Ինք կ'ուզէ: Ուրեմն, ես կ'ուզե՛մ այդպիսին ըլլալ:

Միտելիներ, եթէ պահ մը մեր մտքերէն հանենք Պետրոս Առաքեալի խօսքը, որ մենք օտարականներ ու պանդուխտ ենք, այն ատեն ոչ մէկ իմաստ կը ստանայ 3:1-6 համարները, որովհետեւ այն ատեն մեր ամբողջ ճիգը կ'ըլլայ ինչպէս նմանիլ մեր շրջապատին:

Առաջին իսկ առիթով Պետրոս Առաքեալ կ'ըսէ. «**Կիներ, հնազանդ եղէք ձեր ամուսիններուն**» (3:1): Բառ մը, որուն քիչ մը խորթ կը դիտենք, բայց այս է ճշմարտութիւնը որ մեզի կը փոխանցէ ոչ միայն Պետրոս Առաքեալ այլ նաեւ Պողոս Առաքեալ, երբ այդ հնազանդութիւնը կը տեսնէ երկուստեք, իրարու հնազանդ եղէք, ինչպէս Քրիստոս Ինք, եւ ինչպէս Քրիստոսի դուք երկուքդ: Եւ ինչ բանի համար որ սրբեղծուած են երկուքը, առանց խանգարելու իւրաքանչիւրին դերն ու փերը (հմմտ Եփես 5:21-33, Ա Կորնթ 11:3): Այնպէս ինչպէս Քրիստոս ըլլալով հանդերձ համագոյակից, բնութենակից Հօր Աստուծոյ, բայց ամբողջութեամբ հնազանդեցաւ Հօր Աստուծոյ, երբեք չկորսնցնելով այդ համաբնութենակից հանգամանքը: Նոյնպէս ալ ընդհանրական յարկէն ներս, այր եւ կին հաւասար են Աստուծոյ աչքին, բայց որպէսզի ընդհանրին ներդաշնակօրէն գործէ, կիները, առանց կորսնցնելու որեւէ մէկ արժանապատուութիւն կամ վեհութիւն, հնազանդելու է իր ամուսնոյն, միշտ օրինակ ունենալով Քրիստոսը: Այս երեւոյթը դիտենք, սակայն, իր ընդհանուր գիրծերուն մէջ, նկատի ունենալով նաեւ այր մարդու դերը, որպէս գլուխը կնոջ: Պետրոս Առաքեալ քիչ մըն ալ անդին կ'անցնի պարզ հնազանդութենէն, անոր մէջ տեսնելու քարոզական աշխարհանք. «**որպէսզի նոյնիսկ եթէ ձեր ամուսիններէն ոմանք Աստուծոյ խօսքին հաւատարացող չեն՝ հաւաքի գան առանց խօսքի, պարզապէս դիտելով կիներու ընթացքը, ձեր պարկեշտ եւ երկիւղած կենցաղը**» (2 հմր): Հեթանոս գոյգեր, որոնցմէ կինը հաւաքի էր եկած, եւ հիմա իր կենցաղովը դառնալու քարոզիչ առանց խօսքի, այլ՝ իր իսկ պարկեշտ կեանքովը: Լսելու ոչ թէ ականջով, այլ՝ տեսնելու աչքով: Յաճախ դիւրին է, որ մարդիկ լսեն մեր հաւաքի մասին, քան տեսնեն թէ ինչպէս կ'ապրին մեր հաւաքը: Հիմա որ արդէն կինը դարձի է եկած, բոլորովին փարբեր կենցաղի է որ կը հետեւի, եւ ի տես այս փոփոխութեան ամուսինը տեսնելով այս բոլորը հաւաքի գայ: Պետրոս Առաքեալ շեշտը կը դնէ ներքին գեղեցկութեան, եւ ոչ թէ արտաքին: Բայց արտաքինի պարագային ալ գոյշ ըլլանք փառացի բացապրութեան: Պետրոս Առաքեալի ըսելիքը հետեւեալն է, որ կնոջ գեղեցկութիւնը կախում պէտք չէ ունենայ արտաքին ազդակներէ, այլ՝ ներքին, ու անոր հնազանդութիւնը պէտք է ըլլայ լռութեամբ, պարկեշտութեամբ եւ երկիւղածութեամբ: Այսինքն՝ արդեօք փակաւիճ կարելի է՞ գեղեցկութիւն ունենալ ու գործել նոյնիսկ կճիռներու մէջ: Այո՛, կարելի է երբ այդ գեղեցկութիւնը կու գայ ներսէն, հոն ուր Աստուծոյ բնակութիւնն է:

Իբրեւ օրինակ, Պետրոս Առաքեալ կը յիշէ Սառան, որ նոյնպէս հնազանդեցաւ Աբրահամին, «ւրեր» կոչելով: Ուրեմն, դուք ալ նոյնպէս Սառայի նման, որպէս Սառայի դուստրերը, բարիք ըրէք եւ մի՛ վախնաք, որովհետեւ Տէրը ձեզի հետ է: Ահա Պետրոս Առաքեալ իր այս հապուածով կ'օգնէ, որ կինը, իզական սէրին պատկանողը հասկնայ ու ըմբռնէ ինքզինք ու իր դերը, ինքնութիւնը, որպէս կին եւ ամուսին, ինչ որ այսօրուան աշխարհը շփոթեցուցած է:

Պետրոս Առաքեալ նաեւ կ'անդրադառնայ այրերուն, որպէսզի անոնք ալ Քրիստոսի օրինակովը սիրեն իրենց կիները, ինչպէս պիտի ըսէր Պօղոս Առաքեալ (Եփես 5:25), եւ իմաստութեամբ ապրելու իրենց կիներուն հետ: Ինչպէս Քրիստոս Ինք սիրեց Եկեղեցին, եւ ոչ միայն սիրեց, այլ Իր կեանքը փրկու աւնոր համար: Այս բոլորը ցոյց կու փան գործնական արտայայտութիւնը մեր հաւաքքին, ինչ որ գիտենք ցոյց փանք: Միթէ այսօր նոյն վիճակը չե՞նք ապրիր, ինչ որ կը կարդանք Ծննդոց 3:1 «Իրա՛ւ Աստուած ըսաւ»: Պետրոս Առաքեալի, Պօղոս Առաքեալի խօսքերը երբ կը կարդանք, քրիստոնէայ անհատին կամ ընտանիքի մասին, Չարը նոյն խորամանկութեամբ կու գայ եւ նոյն հարցումը կ'ընէ. «Իրա՛ւ Աստուած ըսաւ այս բոլորը»: Եւ եթէ այդ պատասխանենք, յաջորդ քայլը պիտի ըլլայ ըսելու, «բայց արիկա ըսել չուզեց»: Այս բոլորը որպէսզի հարցականի փակ առնէ Աստուծոյ խօսքին հեղինակութիւնը, ինչ որ Չարին նպատակն է մարդս շփոթեցնելու եւ շեղելու:

Հիմա որ Քրիստոսը ճանչցաւ այդ մարդը ըստ այնմ ապրի իր փիկնոջ հետ, եւ ոչ թէ ինչպէս որ նախապէս կ'ապրէր երբ փակաւին Քրիստոսը չէր ճանչցած: Այդ ճանաչողութիւնը իրեն պիտի փայ իմաստութիւնը ըստ այնմ ապրելու, եւ ի՞նչ բանի իմաստութիւնը, կամ իմաստը, ամուսնութեան, որ Աստուածահիմ պատուէր մըն է եւ ոչ թէ թուղթի վրայ արձանագրուած համաձայնագիր մը, այլ Աստուծոյ ծրագիրն է սկիզբէն, որ այրը պիտի ձգէ իր հայրն ու մայրը եւ իր կնոջ միանայ եւ երկուքը մէկ մարմին պիտի ըլլան: Արդ, ինչ որ Աստուած միացուց մարդը թող չբաժնէ: Ուստի այս գիտակցութեամբ այրեր պատուեցէք ձեր կիները, եւ անոնք թող գիտնան թէ որքան թանկագին են ձեզի համար: Երկրորդ, որովհետեւ անոնք աւելի փկար բնութիւն ունին: Ոչ պարզապէս փկար, եւ մենք, փղամարդը, գօրաւոր, որովհետեւ երկուքն ալ փկար են, այս պարագային կինը աւելի փկար: Այս փկարութիւնը, սակայն, երբեք ալ նուաստացում չէ ու պէտք չէ ըլլայ կնոջ համար:

**Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ ին հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ ին արարածոց եւ ինձ քազմամեղիս:**

